վորվել, իսկ ինքը հագավ պատարագի զգեստը, վրան առավ էմի-փորոնը (ուսնոց), գլխին դրեց թագը, ձեռքն առավ խաչը ու եկեղեցուց դուրս եկավ խաչով ու Ավետարանով, ծնծղաներով ու զանգակով: Սկսեցին շարական ասել՝ Սուրբ Աստված՝ հայր անսկիզբ:

Ամբողջ քաղաքը գրոհելով ելավ քաղաքի հյուսիսային կողմը, որ ասվում է Սուրբ նշանի բլուր: Մինչդեռ շարականը երգելով գնում էին, սկսեց ամպել եղանակը, մինչև հասան սահմանված տեղը, անձրևը սկսեց ցողել: Երբ Ավետարանից կարդացին Զի որպէս փայլակն, երեք անգամ ամպը գոռաց: Երբ սկսեցին թափորը, երկնքի սահանքները բացվեցին և տեղատարափ անձրևներ թափվեցին: Մինչև թափորի ավարտը դաշտը ծով կապեց, ապա վերադարձան եկեղեցին՝ ասելով. Թող հավիտյան թագավորի Տերը: Մտնելով եկեղեցին՝ ասաց՝ աղոթենք սուրբ խաչով, ժողովրդին պահպանի: Եվ երբ փաշան այս երկու հրաշքները տեսավ, բռնեց չարախոս Մինասին և նրանից առավ հազար մառչիլ (մառչիլը հավասար է մոտ 6 1/2 կոպեկի) և ասաց՝ թող խրատ լինի քեզ, որ մի այլ չարախոսություն չանես: Այս բանը պատմեց Հովհան վարդապետ Կարնեցին, որ նույն Մինասի աշակերտն էր:

ԳԼՈՒԽ Ի
ԳԱԼՈՒՍՏ ՔԱՀԱՆԱՅԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երբ պարսից ու թուրքաց երկու թագավորների միջև հաշտություն կայացավ՝ Ջաղաբա-Քոթուկ-Մահմադ խանի գնալ-գալով, Շահ Սաֆին նրան պարգև տվեց Երևանի խանությունը, որովհետև Քալբալի խանը մեռել էր 1088 (1639) թվին: Սրա երկրորդ տարին մի մարդ իր կնոջ հետ եկավ Բասենից և բնակվեց Կոտայք գավառի Արամուս գյուղում: Այդ կինը ծննդաբերեց մի որդի, որին հանձնեցին Գալուստ քահանային մկրտելու: Որպես քրիստոնյայի ծնունդ նա մկրտեց, բայց ոչինչ չառավ նրանցից նրանց աղքատության պատճառով, նաև նրանց տվեց 12 լիտր (լիտրը հավասար է 12 ֆունտ, մի ֆունտը մոտ 400 գրամ) ցորեն, որպեսզի իրենց համար հաց թխեն: Օրեր հետո կնոջ հայրն ու եղբայրը եկան ու ասացին նրա ամուսնուն՝ դու մեր աղջիկն առևանգեցիր, փախած եկար

այստեղ, ինչքը ինչո՞ւ գողացաք, բերիք ձեզ հետ: Նրանք հրաժարվեցին ասելով՝ ինչ որ ասում եք, մենք տեղյակ չենք (դրանից): Շատ ասել-լսելուց և նրանց հրաժարվելուց հետո մարդիկ ձանձրացան, գնացին զանգատագիր գրեցին իրենց աղջկա և փեսայի վրա և տվին խանին: Խանը կանչեց նրանց և ասաց՝ տվեք դրանց իրենց ինչքը: Իսկ նրանք, քանի որ վատնել էին, չկարողացան հատուցել, ուստի ամուսինները մահմեդական դարձան և առավել ևս չարիք գործեցին՝ մատնեցին Գալուստ քահանային, թե մենք վաղուց կամենում էինք մահմեդական դառնալ, Գալուստ քահանան չթողեց, նաև մեր որդուն մկրտեց, իսկ մեզ ցորեն կաշառք տվեց և ասաց՝ ես ձեզ կպահեմ, միայն դուք մահմեդական մի դառնաք, որպեսզի ձեր հոգին չկորչի:

Խանը դաժան մարդիկ ուղարկեց, բերին անմեղ քահանային և կանգնեցրին նրա առջև: Խանը ասաց՝ դու ինչո՞ւ ես մկրտել այս թուրքի որդուն: Քահանան պատասխանեց՝ ես չգիտեի, թե նրանք թուրք են, քանի որ նրանք աղաչեցին ինձ, և ես ինչպես մեր կարգն է, արի նրանց ներկայությամբ: Քանզի քրիստոնյաներից շատերն են մահմեդական դառնում, դրանք էլ են դարձել, մենք ինչ մեղք ենք գործել: Խանը հարցնում է՝ իսկ ինչո՞ւ դրանց ցորեն ես տվել կաշառք: Քահանան ասում է՝ մի՞թե ողորմություն տալը կաշառք է, քանզի քրիստոնյաները սովորություն ունեն ամենքին ողորմություն տալու ըստ մեր Ավետարանի պատվիրանի:

Խանն ասաց՝ այդ ասելով կամենում ես ինձնից ազատվել, այդպես չէ. կամ պիտի մահմեդական դառնաս, կամ չարչարանքով կսպանեմ քեզ: Քահանան ասում է՝ Աստված չանի, որ ես թողնեմ իմ հավատը, բայց եթե առանց հանցանքի ինձ սպանում ես, պատրաստ եմ մեռնելու: Խանը հարցնում է՝ ի՞նչ հանցանքն է ավելի մեծ քան այս, որ մահմեդականի ծնունդին քրիստոնյա ես արել: Տեր Գալուստն ասում է՝ ես ասացի, թե ես չգիտեի, որ նա մահմեդական է, եթե իմանայի, որ նա մահմեդական է, նրա մեր գյուղ գալու ժամանակ չէի թողնի այդ մոլորվածին ընդունել մեր ուղիղ հավատը:

Խանը բարկացավ, հրամայեց նրան ծեծելով բանտ տանել: Եվ երկու օրենսգետ ուղարկեց և ասաց՝ խրատ տվեք թերևս կարողանաք նրան (մահմեդական) դարձնել: